ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ (1945–1947 թթ.)

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, երբ արդեն պարզ էր պատերազմի ելքը, արտերկրում ապրող հայերին իրենց հայրենիքում համախմբելու նպատակով Սփյուռքը Մեծ տերությունների առջև բարձրացրեց Արևմտյան Հայաստանը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու պահանջը: Այդ տարիներին Սփյուռքում ձևավորվել և լայն ծավալ էր ընդունել «ազգային ուժերի միասնության» գաղափարը: Դրան նպաստել էր նախնառաջ միջազգային իրավիճակն ու չեզոքության քողի տակ Թուրքիայի վարած հակախորհրդային քաղաքականությունը: Հետևելով Թուրքիայի պահվածքին՝ սփյուռքահայերը ճիշտ եզրակացություն էին արել, որ իրենց գործելու ժամանակն է. «խաղասեղանի» վրա դրված էր Հայաստանի ապագան, և այդ պատճառով Ստալինգրադի ճակատամարտից հետո ակտիվ միջոցների դիմեցին հայկական հողերի հարցը միջազգային հանրությանը ներկայացնելու ուղղությամբ:

1943 թ. հոկտեմբերի 8-ից սկսած՝ ԱՄՆ-ում գործող Հայկական դեմոկրատական լիբերալ կուսակցության և Ամերիկայի հայկական առաջադիմական լիգայի անդամներն աշխատանքներ սկսեցին արտերկրում գործող հայկական կազմակերպությունների միավորման ուղղությամբ[1]: Արդյունքում Սփյուռքում ստեղծվեցին ազգային խորհուրդներ:

Առաջինը ձևավորվեց Ամերիկահայ ազգային խորհուրդը 1944 թ. մարտի 19-ին՝ Հայկական դեմոկրատական լիբերալ կուսակցության, Ամերիկայի հայկական առաջադիմական լիգայի և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության անդամներից: Խորհրդի առաջին նախագահը ռամկավարների առաջնորդ Պետրոս Ս. Թերզյանն էր, որին փոխարինել են Նշան Շահինյանը, Ջեմս Չանգալյանը: Սկզբնական շրջանում խորհուրդն ուներ ինն անդամ՝ ամեն կուսակցությունից՝ երեքական: Ավելի ուշ Ամերիկահայ ազգային խորհրդի մեջ ընդգրկվել են հայրենակցական քսան կազմակերպություն: Կազմավորման առաջին իսկ օրից խորհուրդը ծավալել է բուռն գործունեություն և ԱՄՆ-ի տարբեր շրջաններում բացել ավելի քան հիսուն մասնաճյուղ[2]:

1944 թ. մարտի վերջերին հաստատվել էր կազմակերպության քաղաքական ծրագիրը, ըստ որի՝ Ամերիկահայ ազգային խորհրդի նպատակն էր համերաշխություն և համագործակցություն ստեղծել գաղութի ներսում, ինչպես

---

[1] Ch. V e r t a n e s. Armenia Reborn. New York, 1947, p. 111.

[2] *Գ. Ա հ ա ր ո ն յ ա ն. Մեծ երազի ճամբուն վրա …, Պեյրութ, 1964, էջ 195:*

նաև աշխատել հայ ժողովրդի գերագույն շահերի պաշտպանության համար[3]: Ծրագրային առաջնահերթությունն էր «օգնել (դաշնակիցներին) պատերազմական ջանքերում», «կազմակերպել ձեռնարկներ և օգնել ձեռնարկներու՝ ի նպաստ Սովետ Միության և Սովետ Հայաստանի», «պաշտպանել տարագիր հայերու իրավունքները հարկ եղած բոլոր միջոցներով և աշխատել՝ ի խնդիր անոնց հայկական հողին վրա վերաբնակեցման»: Փաստաթղթի վերջում ասված էր. «Ամերիկահայ ազգային խորհուրդը հայկական իրավունքներու տերը կճանաչնա Հայաստանի կառավարությունը»[4]:

Ամերիկահայ ազգային խորհրդի հետ միաժամանակ ԱՄՆ-ում գործել է նաև ՀՅԴ կուսակցության կողմից ստեղծված Հայկական ազգային կոմիտեն՝ Ռուբեն Դարբինյանի և Սիմոն Վրացյանի ղեկավարությամբ[5]:

Որոշ ժամանակ անց ազգային խորհուրդներ ստեղծվեցին հայկական այլ գաղթավայրերում ևս: Ֆրանսահայերի ազգային խորհուրդը գլխավորեց գրող, քննադատ, բանասեր, լրագրող և հասարակական գործիչ Ա. Չոպանյանը[6], եգիպտահայերինը՝ նշանավոր երգիծանկարիչ Ալ. Սարուխանը[7]: Ազգային խորհուրդներ կազմավորվեցին Սիրիայում և Լիբանանում, Հունաստանում, Պաղեստինում, Ուրուգվայում և հայկական մնացած գաղութներում:

Ինչպես ամերիկահայերը, այնպես էլ Ֆրանսիայում բնակվող հայերը խնդրո առարկա հարցի համար գործել սկսել էին պատերազմի տարիներին: 1944 թ. փետրվարից–օգոստոս ամիսներին փարիզահայ երիտասարդների մի խումբ տարածել է չորս տեղեկատու թռուցիկ: Դրանցում Հայկական հարցի մասին ասված էր. «Թուրքերու կողմե 1915ին գործված ոճիրին հատուցումը այն օրը կատարյալ պիտի ըլլա, երբ աշխարհի չորս կողմը ցրված Հայերը կարելիություն ունենան վերադառնալու իրենց նախնիքներու երկիրը … Եվ Հայրենիքին վերստին գտնված զավակները պիտի կրնան վերջապես իրենց ճիգերը միացնել Հայաստանի մեջ մնացող իրենց եղբայրներու ճիգերուն, որոնք կը կատարվին հայրենի հողին վրա քսանհինգ տարիե ի վեր՝ մեծամեծ զոհողություններով»[8]: Նշենք, որ այս թռուցիկները ֆրանսահայերի առաջին ուղերձներն էին միջազգային հանրությանը՝ հիշեցնելով, որ Հայկական հարցը դեռևս լուծված չէ, ավելին ակնարկելով, թե հայերի՝ հայրենիք վերադառնալու ժամանակն է:

Ավելի ուշ՝ 1945 թ. ապրիլի 5-ին, Փարիզում տեղակայված Հայ փախստականների կենտրոնական կոմիտեի նախագահ Ա. Չոպանյանը հանդիպել է Ֆրանսիայում ԽՍՀՄ-ի դեսպան Ալեքսանդր Բոգոմոլովին և զրուցել հայկա-

---

[3] S. A t a m i a n. The Armenian Community. New York, 1955, p. 372.

[4] *Հ. Թ ո փ ո ւ զ յ ա ն. Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 252:*

[5] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 034, գ. 95 (նյութեր Սան-Ֆրանցիսկոյի հայկական հուշագրի վերաբերյալ), թ. 283-284:*

[6] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. Հայ ազատագրական շարժման օրերն, Փարիզ, 1947, էջ 14:*

[7] *Մ. Ս ե ր ո բ յ ա ն. Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Կահիրե, 1948, էջ 269:*

[8] *Հայ ազգային դատը, Թուրքական Հայաստանի ազատագրմանը վերաբերող վավերաթղթեր, Փարիզ, 1946, էջ 111:*

կան հողերի վերադարձման ու հայրենադարձության հարցերին[9]: Ֆրանսահայերն իրենց գործունեությունն ակտիվացնելու նպատակով օգոստոսի 13-ին Ֆրանսիայի ազգային ընդհանուր միության կենտրոնական վարչության (որի 56 անդամներից ներկա էին 45-ը) նախաձեռնությամբ կազմվել է «Թուրքահայ դատի պաշտպանության հանձնախումբ», որի պատվավոր նախագահն է ընտրվել պրոֆ. Մ. Մանուելյանը, նախագահ՝ Ա. Չոպանյանը:

1945 թ. օգոստոսի 31-ին Բեյրութում Ադամ Մանուելյանի նախագահությամբ ստեղծվել է Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհուրդը: Խորհրդին իրենց աջակցությունն են հայտնել հայ կոմունիստները, հնչակյանները, ռամկավարները, լիբանանահայ Վերածնունդ միությունը և բազմաթիվ այլ միություններ, խմբակցություններ[10]:

Ստեղծման առաջին իսկ օրից՝ խորհուրդը լայն գործունեություն է ծավալել՝ հիմնականում շարունակելով հանրահավաքներ կազմակերպելու ավանդույթը: Ի դեպ, մինչև կազմակերպության ստեղծումը, Բեյրութում արդեն անցկացվել էին բազմահազարանոց հանրահավաքներ՝ հայկական հողերի վերադարձման պահանջով: Դրանց հանգամանորեն անդրադարձել է ժամանակի մամուլը[11]: Ամենահիշարժանը հուլիսի 29-ին ազգային կուսակցությունների հովանու տակ և Խաղ արք. Աջապահյանի ղեկավարությամբ անցկացված հավաքն էր, որից հետո մասնակիցները հեռագիր են ուղարկել Ստալինին[12]: Սեպտեմբերի 23-ին խորհուրդը միաժամանակյա բազմահազարանոց հանրահավաքներ է անցկացրել Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում և Զախամում: Միայն Բեյրութում դրան մասնակցել են 10 հազար հայեր: Հանրահավաքի վերջում Սիրիայում ու Լիբանանում ապրող 200 հազար հայերի անունից ներկայացվել է Խորհրդային Միության ղեկավար Ստալինին, ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենին և Մեծ Բրիտանիայի վարչապետ Կ. Էտլիին ուղղված դիմումը, որտեղ վերջիններից խնդրում էին Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հողերը հանձնել Խորհրդային Հայաստանին[13]: Հետագայում ևս կազմակերպվել են նման միջոցառումներ:

Պետք է շեշտել, որ ազգային բոլոր խորհուրդները, առաջնորդվելով «Հայերը՝ հայերի համար» կարգախոսով, մեծ նվիրումով և հույսով սկսեցին իրենց գործունեությունը. հրատարակվեցին գրքեր ու գրքույկներ, տպագրվեցին հոդվածներ, թերթիկներ, պատրաստվեցին հուշագրեր և դիմումներ, բացի այդ, ի նպաստ Հայոց դատի կազմակերպվեցին բազմահազարանոց հանրահավաքներ ու հավաքույթներ: Սակայն հարկ է նշել այն իրողությունը, որ այս պայքա-

---

[9] *«Ժողովուրդ» (Փարիզ), 6. V. 1945:*

[10] *Լ. Չ ո ր մ ի ս յ ա ն. Կուսակցությունները, Պեյրութ, 1965, էջ 283:*

[11] *Տե՛ս, օրինակ,* New York Times, 25. IX. 1945, Правда, 28, IX. 1945, Известия, 28, IX. 1945 *և այլն:*

[12] *Զ. Մ ս ը ր լ յ ա ն. Արևմտահայ բռնագրաված հողերու հարցը, 1921–1971.– «Հայկազյան հայագիտական հանդես», Պեյրութ, 1971, էջ 26:*

[13] Правда, 28. IX. 1945.

րում Ամերիկահայ ազգային խորհուրդը դարձավ այն ուժը, որ միավորեց հայկական աշխարհասփյուռ բոլոր կազմակերպություններին և ստանձնեց դրանց կառավարման ղեկը:

Ամերիկահայ ազգային խորհուրդը 1945 թ. սկզբին հասկացել էր, որ Հայկական հարցի լուծման գործում կարող է դրական դեր ունենալ Ազգերի լիգային փոխարինած նորաստեղծ Միավորված ազգերի կազմակերպությունը: Այդ նկատառումով պատվիրակություն է ուղարկվել 1945 թ. ապրիլի 25-ից հուլիսի 26-ը Սան Ֆրանցիսկոյում ընթացող ՄԱԿ-ի առաջին վեհաժողովի աշխատանքներին ներկա լինելու համար[14]: Մայիսի 27-ին ամերիկահայ գործիչները հանդիպել են ՄԱԿ-ում Խորհրդային Միության պատվիրակության հետ և հայտարարել, որ «հայկական հողամասերու վերադարձման խնդիրը կը նկատեր դիվանագիտական հարց և ոչ թե զինվորական»[15]: ՄԱԿ-ում Ամերիկահայ ազգային խորհուրդը ճանաչվել է որպես «ամերիկյան ազգային կազմակերպություն» և դիտորդի կարգավիճակով մասնակցել վեհաժողովի շրջանակում կայացած ֆորմալ և ոչ ֆորմալ բոլոր հանդիպումներին, կապեր է հաստատել տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաների, մամուլի և ռադիոյի ներկայացուցիչների հետ, ֆինանսավորել է ԽՍՀՄ-ի, Ուկրաինայի և Բելոռուսիայի պատվիրակությունների պատվին տրված ճաշկերույթը[16]: Ամերիկահայ ազգային խորհրդի կատարած ամենանշանակալից քայլը, սակայն, ամերիկաբնակ հայերի անունից ՄԱԿ-ին ներկայացրած «Հայ ժողովրդի գործը» պատմական հուշագիրն է: Վերոգրյալին զուգահեռ Հայկական ազգային կոմիտեն 1945 թ. մայիսի 7-ին այս կազմակերպությանը հղել է մեկ այլ հուշագիր՝ «Հայկական հարցի առթիվ» վերնագրով, որը ստորագրել էր Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանը[17]: Այս երկու փաստաթղթերի բովանդակությունը հիմնականում նույնն էր, միայն Հայկական ազգային կոմիտեն, ի տարբերություն ամերիկահայ ազգային խորհրդի, առաջարկում էր հայկական տարածքներից ստեղծել նոր «Հայկական հանրապետություն»: Նկատենք, որ հետագայում կոմիտեն փոխել է դիրքորոշումը և իր գործունեության հիմքում դրել Արևմտյան Հայաստանի հողերի միացումը «Մայր հայրենիքին», այսինքն՝ Խորհրդային Հայաստանին:

«Հայ ժողովրդի գործը» հուշագրում պահանջվում էր հայկական հողերի միացումը ազատ, անկախ գոյություն ունեցող Խորհրդային Հայաստանի Հանրապետությանը և արտասահմանում ապրող ու Հայաստան մեկնելու ցանկություն ունեցող հայերի վերադարձը հայրենիք. «…հասել է ժամանակը, որ Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող հայկական տարածքը միացվի Հայաստանին, ինչը հնարավորություն կտար տարբեր երկրներում բնակվող

---

[14] C h. V e r t a n e s. *Նշվ. աշխ., էջ 113:*

[15] *«Զարթոնք» (Բեյրութ), 15. VII. 1975:*

[16] C h. V e r t a n e s. *Նշվ. աշխ., էջ 113–114:*

[17] *«Արևելք տարեգիրք» (Հալեպ), 1948, էջ 73–77:*

մեկուկես միլիոն հայերին վերադառնալ հայրենիք»[18]: Բացի այդ, հիշեցվում է, որ դաշնակիցներն առաջին աշխարհամարտից հետո հայերին խոստացան հայկական տարածքների ազատագրում, իսկ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը որոշեց անկախ Հայաստանի սահմանները, որը, սակայն, չիրագործվեց: Հուշագրում նշվել է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հայերը կրկին ապացուցել են իրենց նվիրվածությունը ժողովրդավարությանը և ՄԱԿ-ի գործին: Անդրադառնալով պատերազմի տարիներին Թուրքիայի պահվածքին՝ շեշտվել է, որ վերջինս «ապաստան էր որոնում կեղծ չեզոքության քողի տակ՝ միևնույն ժամանակ ցույց տալով նացիստներին ամեն տեսակ օգնություն»[19]: Հուշագրի վերջում ասվել է՝ հասել է ժամանակը, որպեսզի թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական նահանգները միացվեն Խորհրդային Հայաստանին՝ հույս հայտնելով, որ գոնե այս անգամ հայ ժողովուրդը խաղալիք չի դառնա «ուժի քաղաքականության միջազգային շախմատային տախտակի վրա»[20]:

«Հայ ժողովրդի գործը» խորագրով հուշագիրը մեծ արձագանք է ունեցել ինչպես արտերկրում, այնպես էլ մայր հայրենիքում: Այն տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթում՝ ոգևորություն առաջացնելով Հայաստանի բնակչության լայն զանգվածների մեջ. Խորհրդային Հայաստանում ապրող հայությունը սփյուռքահայության առաջ քաշած հարցերը համարում էր միանգամայն բնական և արդարացի: Եվ այդ էր պատճառը, որ տեղական թերթերում տպագրվել են նամակներ՝ ի նպաստ Հայկական դատի՝ «Արդարության ձայն», «Հասել է ժամանակը», «Մեկուկես միլիոն մարդկանց ձայնը» և նման խոսուն վերնագրերով[21]: Դրանցից հատկանշական է անվանի գրող Դ. Դեմիրճյանի հայրենասիրական ոգով գրած նամակը:

ՄԱԿ-ին ներկայացված այս հուշագրերից բացի, հայկական ազգային խորհուրդները խնդրագրեր են ուղարկել նաև Պոտսդամի, Մոսկվայի, Լոնդոնի, Փարիզի և Նյու Յորքի խաղաղության վեհաժողովներին: Այսպես, Հայկական ազգային կոմիտեն 1945 թ. հուլիսի 5-ին՝ Պոտսդամի խորհրդաժողովի նախօրեին, հուշագիր է ներկայացրել Ստալինին, Տրումենին և Չերչիլին: Դրանում ասվում էր. «Հանձնախումբս կը հավատա և կը խնդրե ձեզմե արդար լուծում մը հայկական խռովիչ հարցին, այն է՝ կցել ներկա վերածաղկյալ Հայաստանի Խորհրդային Հանրապետության ոչ միայն Կարս և Արտահանի շրջանները, այլև Թուրքահայաստանը, որ դաշնակից պետությանց առաջարկով սահմանված է նախագահ Ուիլսընենի կողմե»[22]:

1945 թ. հուլիսի 17-ին Ամերիկահայ ազգային խորհուրդը Հայկական հարցը Պոտսդամի խորհրդաժողովի օրակարգում ընդգրկելու համար նույնան-

---

[18] *Armenian National Council of America*, The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, June 4, 1945. New York, 1945, p. 1.

[19] *Նույն տեղում, էջ 2–5:*

[20] *Նույն տեղում, էջ 7:*

[21] *«Սովետական Հայաստան», 15. VI. 1945:*

[22] *«Արևելք տարեգիրք», 1948, էջ 73–77:*

ման փաստաթուղթ է ներկայացրել Մեծ տերությունների առաջնորդներին[23]: Միաժամանակ խորհրդաժողովի հասցեով հեռագրեր են ուղարկվել հայկական այլ գաղթավայրերից: Հուլիսի 31-ին Ռումինիայի հայկական գաղութի ներկայացուցիչները հանրահավաք էին հրավիրել Բուխարեստում և Թուրքիայի կողմից բռնագրավված հայկական տարածքները միացնելու պահանջով դիմել Մեծ տերությունների երեք ղեկավարներին[24]: Օգոստոսի 3-ին նման խնդրագրով Պոտսդամի խորհրդաժողովին դիմել է Հարավային Ամերիկայի հայկական գաղութների գործադիր կոմիտեն[25]:

Ավելի ուշ՝ 1945 թ. սեպտեմբերի 15-ին, Ամերիկահայ ազգային խորհուրդը նույնաբովանդակ հեռագիր է հղել նաև Լոնդոնում գումարված Մեծ տերությունների արտաքին գործերի նախարարների հանդիպմանը[26]: Հեռագիրը լայն արձագանք է գտել ոչ միայն անգլիական, այլև ամերիկյան ու ֆրանսիական մամուլում: Այնտեղ ասվում էր. «Ամերիկահայ ազգային խորհուրդը հարգանք կը հանձնե ձեր պատկառելի մարմնին նկատառության և արդարամիտ տրամադրության երկարամյա պահանջները հայ ժողովուրդին…

Ժամանակը հասած է որ արդարություն ըլլա Հայաստանին և հայերուն, արդարություն մը, որ անցած հարյուրամյակի պատմական հեռանկարի՝ կրնա նշանակել ոչ նվազ քան ազգահավաքումը աշխարհի երեսին ցիրուցան եղած մեկուկես միլիոն թրքահայերու և Թուրքիո մեջ հայկական նահանգներու միացումը Սովետական Հայաստանի ազատ և ապահով հանրապետության»[27]: Արտգործնախարարներին նամակ–դիմում էին նաև հղել Ռեյսինում (Վիսկոնսին նահանգ) այդ օրերին ի պաշտպանություն Հայկական դատի կայացած բազմահազարանոց հանրահավաքի ներկայացուցիչները: Ռեյսինի հայկական եկեղեցիների ներակայացուցիչ Ե. Կալֆայանը հիշեցրել էր, որ 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովը պահանջել էր հայերի ազատագրումը թուրքական լծից՝ ակնարկելով, թե մինչ օրս այդ տարածքները, սակայն, շարունակում են մնալ Թուրքիայի տիրապետության տակ[28]: Բացի այդ, Լոնդոնի խորհրդաժողովի մասնակիցներին դիմել են Կալիֆոռնիայի, Ֆիլադելֆիայի, Քոնեքթիքութի հայերը, Ֆրանսիայի, Ռումինիայի, Սիրիայի ու Լիբանանի հայկական ազգային խորհուրդները, Ամերիկայի հայկական ավետարանչական միությունը[29]:

Սփյուռքը, ինչպես և սպասվում էր, մեծ ակտիվություն է ցուցաբերել նաև երեք տերությունների արտաքին գործերի նախարարների՝ Մոսկվայում 1945 թ.

---

[23] *Armenian National Council of America*, Text of Memorandum to the Big Three in Session in Potsdam, Germany, July 17, 1945. New York, 1945, p. 1–3.

[24] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47 (նյութեր Թուրքահայաստանի գործի մասին), թ. 128:*

[25] *Նույն տեղում, թ. 108:*

[26] *Armenian National Council of America*, Text of Memorandum Sent to the Council of Ministers for Foreign Affairs in London, September 15, 1945. New York, 1945, p. 1–3.

[27] *«Զարթոնք», 21. II. 1970:*

[28] Правда, 21. IX. 1945.

[29] *Նույն տեղում:*

դեկտեմբերին կայացած խորհրդակցության օրերին՝ կրկին պահանջելով Թուրքիայի հայկական տարածքների միացումը Խորհրդային Հայաստանին:

1946 թ. հայերը շարունակում էին հույսեր փայփայել՝ կրկին ու կրկին փորձելով Հայկական հարցը բարձրացնել դաշնակից երկրների ղեկավարների հանդիպումների ընթացքում: Այս առումով, հունվարին Լոնդոնում գումարված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանը բացառություն չէր: Այդ օրերին հայկական բազմաթիվ կազմակերպություններ իրենց հեռագրերով, ուղերձներով ողողեցին Լոնդոնը: Ինչպես միշտ, Ամերիկահայ ազգային խորհուրդը առաջինն էր, որ հղեց իր ուղերձը՝ ակնարկելով, թե ՄԱԿ-ն այն կառույցն է, որ պարտավորված է վերականգնելու պատմական արդարությունը[30]: Լիբանանի հայկական ազգային խորհուրդն իր հերթին Սիրիայում և Լիբանանում ապրող 200 հազար հայերի անունից պահանջում էր Խորհրդային Հայաստանին միացնել Թուրքիայի կողմից բռնազավթած տարածքները[31]: Եգիպտոսի հայկական ազգային խորհուրդն էլ իր ուղերձում գրել էր. «Հայկական հարցը քարոզչություն չէ: Դա արդարացի պահանջ է, որ երբևիցե մարդկությունը գիտե … Աշխարհի բոլոր հայերը պահանջում են, որ Խորհրդային Հայաստանին միացվի Թուրքիայի զավթած արևելյան նահանգները: Այդ հողերը բնակեցված են եղել հայերով և 4000 տարվա ընթացքում՝ մինչև 1915 թ., ծաղկել են: Եթե այս հողերը հայկական չեն թուրքերի կոտորածի պատճառով, ապա նրանք ևս զրկված են այստեղ ապրելու և կյանքի իրավունքից: Ցանկացած դեպքում կոտորածները նրանց թույլ չեն տալիս սեփականացնել այս տարածքները: Այդ տարածքների միացումը Խորհրդային Հայաստանին վերջ կդնի անարդարությանը և կլուծի ողջ աշխարհով մեկ ցրված հայերի վերադարձի հարցը»[32]: Նստաշրջանին դիմել են նաև Ուրուգվայի, Արգենտինայի, Շվեյցարիայի հայկական գաղութների ներկայացուցիչները, Փարիզում գործող «Թուրքահայաստանի պաշտպանության կոմիտեն»[33]:

1946 թ. մայիսին ԱՄՆ-ի հայկական տասնվեց կազմակերպություններ ուղերձով դիմել են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, որով խնդրում էին Անվտանգության խորհրդի օրակարգ մտցնել Հայկական հարցը՝ շեշտելով, որ աշխարհով մեկ սփռված չորս միլիոն հայեր պահանջում են, որ Խորհրդային Հայաստանը ստանա Կարսը, Արդահանը, Էրզրումը, Տրապիզոնը, Բիթլիսը և Վանը, որոնք,

---

[30] *Armenian National Council of America*, Text of Memorandum Sent by Cabel to the Assembly of the United Nations in London by the Armenian National Council of America and by the Conference of Armenian Compatriotic Societies in New York, Jan. 31, 1946. New York, 1946, p. 2.

[31] *ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 103 (Լիբանանահայ ազգային խորհրդի հեռագիրը ուղարկված ՄԱԿ՝ «Պատմական Հայաստանի հողերը Սովետական Հայաստանին միացնելու առաջարկությամբ»), թ. 1:*

[32] Armenian Claims in the Light of Documents, Memorandum Submitted to the United Nations Organization Meeting in London, January 10, 1946, p. 7.

[33] *ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 148 (Ֆրանսահայերի կոչը ՄԱԿ-ի ներկայացուցիչներին՝ «Պատմական Հայաստանի հողերը Սովետական Հայաստանին միացնելու հարցի մասին»), թ. 17:*

ըստ Վ. Վիլսոնի գծած քարտեզի, Հայաստանի կազմում էին ընդգրկվելու[34]: ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին համանման ուղերձներ է հղել Կալիֆոռնիայի արքեպիսկոպոս Գալաֆյանը: Նա գրում էր, որ եթե Հայաստանը նորից պետք է տուժի Մեծ տերությունների ընչաքաղցությունից և հակամարտությունից, ապա մարդկությունը կհամարձակվի արդյո՞ք խոսել արդարության մասին[35]:

Սփյուռքահայերին պահանջատիրության հարցում պաշտպանել է նաև եկեղեցին: Եկեղեցի-սփյուռք համագործակցության առաջին քայլը եղավ 1945 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունները: Դրան մասնակցող պատվիրակությունների ներկայացուցիչները Ի. Ստալինին ուղղված խնդրագիր են պատրաստել, որտեղ հիմնականում անդրադառնում էին հայերի դարավոր երազանքի իրականացմանը, այն է՝ Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հողերի միացումը մայր հայրենիքին և սփյուռքահայերի ցանկությունը՝ վերադառնալ և բնակություն հաստատել Խորհրդային Հայաստանում: Ազգային եկեղեցական Ժողովի այս դիմումը միայն գործընթացի սկիզբն էր. եկեղեցական կազմակերպություններն այս ուղղությամբ լայնածավալ գործունեություն են ծավալել, նրանց կողմից հետագայում ևս եղան նման դիմում-ուղերձներ: Այսպես, 1945 թ. սեպտեմբերին Ամերիկայում Հայկական ավետարանական միությունը Պրովիդեսում (ԱՄՆ-ի Ռոդ-Այլանդ նահանգ) կայացած նիստում ուղերձով դիմել է Լոնդոնում ընթացող արտգործնախարարների խորհրդին: Պահանջը նույնն էր՝ վերադարձնել հայկական տարածքները[36]: Իսկ ավելի ուշ՝ 1946 թ. փետրվարին, ԱՄՆ-ում գործող հայկական չորս մեծ կազմակերպություններ՝ Ամերիկահայ ազգային խորհուրդը, Հայերի շահերի պաշտպանության ամերիկյան կոմիտեն, Հյուսիսային Ամերիկայի հայ եկեղեցու բաձրագույն հոգևորականությունը և Ամերիկայի հայկական միսիոներների ասոցիացիան հուշագրով դիմել են Շվեյցարիայի Ժնև քաղաքում «Եկեղեցու համաշխարհային խորհրդի ժամանակավոր կոմիտեի» հրավիրած նստաշրջանին՝ խնդրելով, որ եկեղեցիների համաշխարհային խորհուրդը ավելի քան մեկ միլիոն հայ փախստականներին ցույց տա բարոյական աջակցություն՝ հայրենիք վերադառնալու համար և այդ առթիվ դիմեր ՄԱԿ-ին[37]: 1946 թ. օգոստոսին Քեմբրիջում (Անգլիա) «Եկեղեցու դերը միջազգային հարաբերություններում» հրավիրված համաժողովին էլ խնդրագրեր են ներկայացրել Ամերիկահայ ազգային խորհուրդն ու Հյուսիսային Ամերիկայում գործող հայկական եկեղեցական բոլոր կազմակերպությունները[38]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Սփյուռքն իր պահանջներով դիմել է Մեծ տերությունների ղեկավարներին, այդ երկրների արտաքին գործերի նախարարնե-

---

[34] *ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 119 (Ամերիկահայ ազգային խորհրդի կոչերը ուղարկված անվտանգության խորհրդին և ՄԱԿ-ի այլ ներկայացուցիչներին՝ «Հայկական հարցը լուծելու վերաբերյալ»), թ. 4-5:*

[35] *Նույն տեղում, թ. 12:*

[36] Правда, 1. X . 1945.

[37] C h. V e r t a n e s. *Նշվ. աշխ., էջ 120:*

[38] *Նույն տեղում:*

րին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, միջազգային այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին և Խորհրդային Հայաստանի ղեկավարներին: Հասկանալի է, որ դրանց բովանդակությունը նույնն էր, պահանջը՝ մեկը: Այդ խնդրագրերը լուսաբանվել և մեկնաբանվել են ինչպես սփյուռքահայ, այնպես էլ խորհրդային ու օտարերկրյա մամուլում: Այդ տարիներին օտարերկրյա թերթերում լույս են տեսել հայկական հողային պահանջին վերաբերող բազմաթիվ հոդվածներ և նամակներ: Այսպես, 1945 թ. հուլիսի 4-ին «Նյու Յորք Թայմս»-ում հրապարակվել է գրող Լևոն-Զավեն Սյուրմելյանի նամակը, որտեղ նա պաշտպան է կանգնում Կարսի և Արդահանի՝ ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացված պահանջին[39]:

Միջազգային հանրությանը Հայկական հարցին ծանոթացնելու նպատակով հայկական ազգային խորհուրդները տպագրել և տարածել են գրքույկներ ու թռուցիկներ: Դրանցից հիշարժան են ամերիկահայերի հրատարակած «Հայկական գործը» և «Հայկական հարցին վերաբերյալ հուշագիրը», որոնք մանրամասներ են հաղորդում հայ ժողովրդի պատմության, կոտորածների և դարավոր երազանքի մասին[40]:

Ամերիկահայ ազգային խորհուրդը չի բավարարվել միայն վերոհիշյալ հուշագրերի, հեռագրերի առաքումով: Խորհրդային Հայաստանի իրավիճակը տեղում ուսումնասիրելու նպատակով 1945 թ. ամռանը Պետրոս Թերզյանի, Պատրիկ Մելյանի և հայրապետ Ջիմ Չանքալյանի ղեկավարությամբ պատվիրակություն է եկել հայրենիք: ԱՄՆ վերադառնալուն պես՝ պատվիրակությունը 1945 թ. հոկտեմբերի 17-ին Նյու Յորքի «Ջ. Վաշինգտոն» հյուրանոցում մամուլի ասուլիս է հրավիրել ու ներկայացրել իր տպավորությունները՝ հայտնելով, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ևս պաշտպանում է Թուրքիային ներկայացրած իրենց պահանջները[41]: Բացի այդ, տեղեկացրել են, որ Խորհրդային Հայաստանի կառավարության վերահսկողությամբ երկրի բնակչության շրջանում անցկացվում են հանդիպումներ և զրույցներ, որոնց ընթացքում ներկայացվում–– պարզաբանվում են սփյուռքահայության կողմից թուրքական իշխանության ներքո գտնվող հայկական հողերի վերադարձման պահանջի մասին հուշագրերը: Ըստ պատվիրակության անդամների, դա վկայում էր, որ ԽՍՀՄ-ն իրենց հետ համակարծիք է[42]:

Մեծ տերությունների աջակցությունը ստանալու ակնկալությամբ արտերկրում ապրող հայերը ձգտել են համագործակցել տվյալ երկրի կառավարության անդամների, օրենսդիրների, գիտության և արվեստի ներկայացուցիչների հետ: Ամերիկահայ ազգային խորհուրդը, օրինակ, Սենատում ի նպաստ հայկական դատի հավաքել է 20 հազար ստորագրություն: Միաժամանակ ստեղծվել է հայերի իրավունքների պաշտպանության հանձնախումբ՝ սենատոր Է. Սմիթի նա-

[39] New York Times, 4. VII. 1945.

[40] *Armenian National Council of America*, The Armenian Cause, New York, 1945, p 2–4; A Memorandum Relating to the Armenian Question, New York, 1945, p. 1–11.

[41] *«Զարթոնք», 17. VII. 1975:*

[42] *Նույն տեղում:*

խագահությամբ. վերջինիս կից էլ կազմավորվել է «Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեն», որի անդամներից էին նաև կոնգրեսմեն Է. Սելրը, նշանավոր վիպասան Թ. Դրայզերը և ուրիշներ: Նշենք, որ ամերիկյան այս կազմակերպությունը 1946 թ. ապրիլի 28-ին Նյու Յորքի «Քարնեգի Հոլի» մեջ կազմակերպել է մեծ միջոցառում ի նպաստ հայկական դատի: Իրենց ելույթներում սենատոր Չարլզ Թոբին, կոնգրեսմեններ Է. Սելրը, Չ. Սնեյջը և ուրիշներ պահանջել են «արդարություն հայերի համար», այսինքն՝ հայկական հողային պահանջների արդար լուծում: Վերջիններս «Արդարություն հայերի համար» կոչը բարցրաձայնել են նաև Համաշխարհային հայկական կոնգրեսի ընթացքում: Վերոհիշյալ միջոցառումը 1947 թ. սփյուռքահայերի ձեռնարկած գործողություններից ամենահատկանշականն է: Այն կայացել է Նյու Յորքում 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 6-ը՝ Ամերիկահայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ: Այդ օրերին խորհրդային, սփյուռքահայ և ամերիկյան թերթերը կոնգրեսի հրավիրման փաստն անվանել են պատմական ու եզակի մի իրադարձություն: Իրենց ուղերձներում այն բարձր են գնահատել Խորհրդային Հայաստանի ղեկավար այրերը՝ Գրիգոր Հարությունյանը, Մացակ Պապյանը, Սահակ Կարապետյանը, ինչպես նաև գիտության ու մշակույթի բազում գործիչներ[43]: Ավելի ուշ, սակայն, խորհրդային հայ պատմաբանները, հետևելով Մոսկվայի հրահանգներին, շրջանցեցին և մոռացության տվեցին Նյու Յորքում տեղի ունեցած այդ մեծ իրադարձությունը: Սփյուռքահայ պատմաբաններն էլ այն կհամարեն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հայկական հարցի լուծման նպատակով ստեղծված ազգային խորհուրդների գործունեության գագաթնակետը:

Համաշխարհային հայկական կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար 22 երկրներից Նյու Յորք էին ժամանել 720 հայ պատգամավորներ՝ հայության օրախնդիր հարցերը քննարկելու համար, այն է՝ Հայկական հարցը, հայրենադարձության, գաղութահայերի համագործակցության և այլ խնդիրներ: Կոնգրեսին մասնակցող սենատոր Չ. Թոբին շեշտել է. «Արդարությունը պահանջում է, որ Հայաստանը ընդգրկվի նախագահ Վիլսոնի գծած սահմաններում»[44]: Ավելին, մասնակից բոլոր պատգամավորների ելույթներում հնչել է հետևյալ արտահայտությունը. «Ժամանակը եկել է, որ Հայկական հարցը իր վերջնական լուծումը ստանա»[45]: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ը կոնգրեսին հղած ուղերձում նշել է. «Մենք անվերապահ իրավունք ունենք և՛ պահանջելու, և՛ ակնկալելու մեր արդար դատի պաշտպանությունը մանավանդ այսօր, երբ Ատլանտյան Խարտիան և ՄԱԿ-ի կանոնադրությունը ազդարարել են մարդկային իրավունքների, ազգերի ազատագրության, քաղաքական արդարության և այլ բարձր սկզբունքներ»[46]: Համաշխարհային հայկական կոնգրեսի մասնակիցնե-

---

[43] *Համառոտ տեղեկություն Համաշխարհային Հայկական քոնգրեսի ապրիլի 30 – մայիսի 4, 1947, Նյու Յորք, 1947, էջ 11–12:*

[44] *Նույն տեղում, էջ 5:*

[45] *Նույն տեղում, էջ 6:*

[46] *Նույն տեղում, էջ 9:*

ը խնդրագրերով դիմել են ՄԱԿ-ին և Մեծ տերությունների կառավարություններին՝ պահանջելով Հայկական հարցի վերջնական ու արդարացի լուծում[47]:

Նյու Յորքում կայացած Համաշխարհային հայկական կոնգրեսը մեծ դեր է խաղացել սփյուռքահայերի կյանքում. այն մի քանի օրով միավորել է իրարից անջատ գործող հայկական ազգային խորհուրդներին և աշխարհին մեկ անգամ ևս հիշեցրել, որ Հայկական հարցը սպասում է իր լուծմանը:

Հայերի ներկայացրած պահանջը, սակայն, կրկին անտեսվել է: Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի շահերը չէին համընկնում հայկական շահերի հետ: Սփյուռքահայերի համար դա հատկապես ակնհայտ է դարձել, երբ Համաշխարհային հայկական կոնգրեսի պատվիրակությունը փորձել է վերոհիշյալ խնդրագրերից մեծը հանձնել ԱՄՆ-ի կառավարությանը: 1947 թ. մայիսի 12-ին ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դ. Աչիսոնի հետ կայացած նրանց հանդիպման ժամանակ ամերիկացի պաշտոնյան խոսել է Հայկական հարցի լուծման ճանապարհին առկա դժվարությունների մասին[48]: Աչիսոնն ասել է. «… այն չափով, որ մեծանա և հզորանա Հայաստանը, նույն չափով կաճի ուժը մեր գլխավոր թշնամու՝ Սովետական Միության»[49]: Այլ կերպ ասած՝ Վաշինգտոնը որոշել էր ամեն գնով թույլ չտալ Թուրքիայի անդամահատումը: Ավելին՝ սփյուռքահայերի ձեռնարկած վերոհիշյալ քայլերը՝ հեռագրերը, դիմում–նամակները, հուշագրերը, այցերը, կազմակերպած այլևայլ միջոցառումները հակառակ ազդեցությունն են ունեցել. Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը դրանցում տեսնում էին ոչ թե ազգային շարժման, այլ խորհրդային ազդեցության արդյունք:

Այսպիսով՝ չնայած 1945 թվականից Հայկական հարցի շուրջ Սփյուռքում ծավալված գործողությունները դրական արդյունք չեն ունեցել, սակայն այդ տարիներին Հայկական հարցը ոչ միայն Ամերիկահայ ազգային խորհրդի շուրջ է միավորել համայն աշխարհի հայությանը, այլև այս խնդրին վերջնական լուծում տալու համար սփյուռքահայերի կողմից մշակվել է գործողությունների նոր ռազմավարություն: Հայկական ազգային խորհուրդները սկսել են համագործակցել տվյալ երկրի կառավարության անդամների, օրենսդիրների, գիտության և արվեստի ներկայացուցիչների հետ: Հետպատերազմյան շրջանում սկսված նման քաղաքականությունը հիմք է հանդիսացել հետագայում օտարերկրյա խորհրդարաններում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացի համար:

---

[47] *Armenian National Council of America*, A Memorandum on the Armenian Question, Presented to the Council of Foreign Ministers, March 7, 1947, New York, 1947, p. 1–7; The Resolution to the United Nations Submitted by the World Armenian Congress, New York, 1947, p. 1–11; An Appeal to the Member Governments and Their Delegates to the United Nations, July 1, 1947. New York, 1947, p. 1–5.

[48] *Գ. Ա հ ա ր ո ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 199:*

[49] *Ա. Ա ն դ ր ե ա ս յ ա ն. Հայկական դատի նոր հանգրվանը, Պեյրութ, 1967, էջ 24:*

АРМЯНСКАЯ ДИАСПОРА И ПРОБЛЕМА РЕШЕНИЯ АРМЯНСКОГО ВОПРОСА (1945–1947 гг.)

КРИСТИНЕ МЕЛКОНЯН

Р е з ю м е

После победы СССР над фашистской Германией среди армян, проживающих в Америке, Европе, на Ближнем и Среднем Востоке, возросла вера в решение Армянского вопроса и возвращение их на родину – в Советскую Армению. В диаспоре начали создаваться армянские национальные советы, которые внесли неоценимый вклад в решение Армянского вопроса. В 1945–1947 гг. обсуждение Армянского вопроса на международной арене не дало положительных результатов. При этом в поствоенные годы армянской диаспорой была разработана новая стратегия, которая в дальнейшем положила начало процессу признания и осуждения Армянского геноцида парламентами многих стран.

ARMENIAN DIASPORA AND THE PROBLEM OF THE SOLUTION OF THE ARMENIAN QUESTION (1945–1947)

CHRISTINE MELKONYAN

S u m m a r y

After the victory of the USSR over fascist Germany among the Armenians living in America, Europe, Near and Middle East, the belief of the solution of the Armenian Question and their returning home – to Soviet Armenia increased. In the Diaspora the Armenian national councils which brought invaluable contribution to the solution of the Armenian Question started to be created. In 1945–1947 the discussion of the Armenian Question in international scene didn’t give positive results. In spite of this in post-war years the Armenian Diaspora had developed a new strategy which later on began the process of recognition and condemnation of the Armenian Genocide by parliaments of many countries.